

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

10.09.2014

Սեպտեմբերի 9-ին Գեղարքունիքի մարզպետարանում մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը կատարեց քաղաքացիների ընդունելություն: Մարզպետն ընդունեց տարբեր խնդիրներով իրեն դիմած 41 քաղաքացու: Ներկայացված դիմումներն առնչվում էին աշխատանքի տեղավորման խնդրի, դրամական օգնություն ցուցաբերելու, առողջարանային կամ պետպատվերով բուժման ուղեգիր ստանալու, ուսման վարձ վճարելու հետ կապված խնդիրներին: Քաղաքացիների հիմնական մասի դիմում- խնդրանքները բավարարվեց տեղում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն պահանջող մի քանի դիմումներ հաշվառվեցին մարզպետարանի աշխատակազմում և կպատասխանվեն օրենքով սահմանված ժամկետում:

Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն առանձնահատուկ ուշադրություն և վերաբերմունք ցուցաբերեց Ծովինար գյուղում բնակվող Մարգարյանների 13 հոգանոց ընտանիքին՝ հատկացնելով դրամական օգնություն՝ երեխաներին հագուստ, գրենական պիտույքներ գնելու և դպրոց ուղարկելու համար: